ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1950 *Общественные науки*

ՆՈՐ ԴՈԿՈՒՄԵՆՏՆԵՐ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայ բանասիրությանը վաղուց ի վեր զբաղեցրել է այն հարցը, թե եղե՞լ է արդյոք Աբովյանը Դորպատի (այժմ Տարտու) համալսարանի ուսանող։

Որ Աբովյանը այնտեղ սովորել է, այդ մասին կասկած չկա։ Սակայն, ո՞ր բաժնում է սովորել իբրև ուսանող, թե ազատ ունկնդիր, ավարտե՞լ է արդյոք համալսարանական լրիվ դասընթացը, թե՞ ոչ, կամ թերևս Պարրոտի կողմից մշակված մի առանձնահատուկ կուրս է անցել՝ համալսարանի դասախոսներից մասնավոր դասեր առնելու և ուսուցչական սեմինարիայում իր միջնակարգ կրթությունը լրացնելու միջոցով։ Այս հարցերը մինչև այժմ էլ լրիվ չափով չեն պարզաբանված։

1899 թվականին բանասեր և բանահավաք Սարգիս Քամալյանը փորձելով վերոհիշյալ հարցի մասին Դորպատի համալսարանի արխիվներից ճշգրիտ տեղեկություններ քաղել, ոչ մի արդյունքի չի հանգում։ Նա ոչ միայն անկարող է լինում գտնել Աբովյանի գործը, այլև համալսարանի ուսանողական ցուցակներում չի գտնում Աբովյանի անուն-ազգանունը։ Սրանով էլ կարծեք թե խնդիրը սպառվում է։ Համենայն դեպս, երկար ժամանակ փորձ չի արվում կասկածի առնել Քամալյանի հաղորդած փաստի ստուգությունը։ Ավելին, ստեղծվում է մի քարացած տրադիցիա, որի հետ կամա ակամա հաշտվում են, թեև այնուամենայնիվ անկարելի է համաստեղել համալսարանի արխիվում Աբովյանի գործը քննելու փաստը, բազմաթիվ այն փաստերի հետ, որոնք խոսում էին Դորպատի համալսարանում Աբովյանի սովորած լինելու օգտին։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ սովետական բանասերները չէին կարող անտարբեր մնալ այդ կարևոր հարցի նկատմամբ։

1948 թ. վերջերին, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Հրայր Մուրադյանը Աբովյանի վերաբերյալ արխիվային նյութեր որոնելու հատուկ առաջադրանքով, ինստիտուտի կողմից, գործուղվում է Դորպատ։ Էստոնական ՍՍՌ-ի Պետական արխիվի Դորպատի համալսարանի բազմահարուստ ֆոնդերի քարտոտեկայում ընկ. Մուրադյանին հաջողվում է գտնել Աբովյանի գործի քարտը, որից պարզվում է, որ Աբովյանը հատուկ գործ ունի այնտեղ, մի հանգամանք, որ մինչ այդ անհայտ է եղել նաև նույն արխիվի աշխատակիցներին, թեև նրանք այդ ուղղությամբ որոնումներ կատարած են եղել։ Չնայած արխիվի աշխատակիցների անկեղծ նախանձախնդրությանն ու բուռն ջանքերին՝ գտնելու Աբովյանի գործը, սակայն այդ օրերին չի հաջողվում գտնել, քանի որ պատերազմի հետևանքով զգալի կերպով տուժած այդ արխիվը դեռևս վերջնականապես կարգավորված չէր, գտնվում են միայն Աբովյանի վերաբերյալ մի քանի կարևոր դոկումենտներ, այդ թվում հասալ-

սարանի ազատ ունկնդիրների 1830 թ. մի ցուցակը, ուր հիշատակվում է Խաչատուր Աբովյանի անուն-ազգանունը։

Վերջերս, ինչպես պաշտոնապես հաղորդում են Էստոնական ՍՍՌ-ի Պետական արխիվից, գտնված է Աբովյանի ամբողջ գործը, որը բաղկացած է 60 էջից։ Ստորև տպագրում ենք Էստոնական ՍՍՌ Պետական արխիվի դիրեկտորի տեղակալ ընկ. Մ. Յավկինայի հոդվածը։